

## **Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ**

10.11.2017



### **Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի ներկայացուցիչներ,**

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ:

Տեղական ինքնակառավարման համակարգը պետական և հասարակական կարևորագույն ինստիտուտ է և իր մեծագույն դերակատարումն ունի պետության կայացման ու հզորացման գործում: Ինքնակառավարման 21-ամյա ընթացքը արձանագրել է ձեռքբերումներ ու հաջողություններ՝ դառնալով հիմնարար հարցերի լուծման բարդ գործընթացներին քաղաքացու մասնակցության հնարավորությունն ու երկրի զարգացման հիմնասյուններից մեկը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիդ տոնի առթիվ և մաղթում հաջողություններ ու հաստատակամություն ձեր պատասխանատու առաքելության իրականացման ճանապարհին:

**Արամայիս Գրիգորյան**

**ՀՀ Արարատի մարզպետ**